

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ Տ-Ի ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ
ՇՈՒՐՋ

Հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզուների քերականական ընդհանրությունների համեմատական ուսումնասիրությունը նոստրատիկ լեզվաբանության արդիական խնդիրներից է: Այս համատեքստում պակաս կարևոր չէ հայ-ֆիննաուգրական քերականական ընդհանրությունների քննությունը: Հայտնի է, որ տարբեր լեզվաընտանիքների լեզվական իրողությունների համեմատական քննութուն կատարելիս հաճախ անտեսվում են առանձին լեզուների բառային և քերականական որոշակի տվյալներ, թերևս, ուսումնասիրվող նյութի մեծ ծավալների պատճառով: Օրինակ, հնդեվրոպական և այլ լեզվաընտանիքների պատկանող լեզուների բառապաշարի համեմատական քննություն կատարելիս հիմնականում համեմատության նյութ են դառնում հայերենի այն արմատները, որոնք հաստատապես հնդեվրոպական են համարվում: Չստուգաբանված կամ կասկածելի ստուգաբանություն ունեցող արմատների զգալի մասը մնում է ուսումնասիրությունից դուրս: Նույնը վերաբերում է քերականական կազմիչներին: Համեմատաբանների ուշադրությունից հաճախ դուրս են մնում տվյալ լեզվաընտանիքին «ոչ բնորոշ» քերականական իրողություններ, որոնց արտաքին համեմատությունը կարող է բավականին արդյունավետ լինել:

Հայ-ֆիննաուգրական քերականական զուգադիպումները փոքր թիվ չեն կազմում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց մի մասը հ.-ե. մյուս լեզուներում հայտնաբերված չէ: Գոյություն ունի հայ-ֆիննաուգրական ընդհանրությունների մեկ այլ շերտ, որը, բացի հայերենից, հայտնաբերված է նաև հ.-ե. այլ լեզուներում, սակայն առանց հայերենի տվյալների նրանց համեմատական քննությունը կարող է թերի լինել:

Ներկա հոդվածում քննության ենթ առել հ.-ե. շարժական *ս-ն*, որը համեմատաբանության մեջ համարվում է բացառապես հնդեվրոպական երևույթ: Ֆ.-ուգր. լեզուների բառային որոշակի շերտի վերլուծությունը և նրա համեմատությունը հ.-ե. արմատների հետ ցույց է տալիս, որ ֆ.-ուգր. լեզուներում առկա է շարժական *ս-ին* համարժեք մասնիկ, որը միշտ առանձին վանկ է կազմում:

Ըստ Հ. Աճառյանի հայերենի *զ* սաստկացուցիչը գործածվել է հայցական, պատմական և պարառական (մի բանի շուրջը) հոլովները կազմելու համար: *Չ* սաստկականի հետ Հ. Աճառյանը նույնացնում է *ս* նախամասնիկը՝ *սկոռել*,

սքողել, սքուիվել, որը շարժական *s*-ի համարժեքն է: *2* նախամասնիկը գրաբարում հայցական հոլովի հետ դրվելով՝ որոշյալ առում է ցույց տալիս: Հայցականում գոյականին կարող է ավելանալ նաև *-ն* որոշյալ հոդը, որի դեպքում հավանաբար, մենք գործ ունենք որոշյալ հոդի կրկնակի գործածության հետ:

Ի՞նչ է *զ* նախամասնիկի սկզբնական իմաստը: Եթե այն գոյականին հաղորդում է որոշյալ կամ սպստկական իմաստ, ապա այն պետք է ծագած լինի ցուցական դերանունից և այդ դերանվան մնացորդն է: Նույն կերպ իտալերեն *stasera, stanotte, stamattina* բառերում *sta* մասնիկը *questa* ցուցական դերանվան մնացորդն է: Եթե *զ* նախամասնիկը հայերենում իրոք ցուցական դերանվան մնացորդն է, ուրեմն այն ունեցել է նաև խուլ տարբերակ: Ինչպես որ ռուսերենի *без-, из-, раз-* նախածանցներում *з-*ն խուլ բաղաձայնից առաջ խլանում է, իտալերենի *s-* ածանցը ձայնեղ բաղաձայնից առաջ ձայնեղ արտասանություն է ստանում (*scomodo* [*s-*], *sbaglio* [*z-*]), այնպես էլ այս դերանվանական մնացորդը ձայնավորներից և ձայնեղ բաղաձայններից առաջ ձայնեղացել և *զ* հնչումն է ստացել: Հայերենում կան *զ/ս* նախամասնիկով բազմաթիվ բառեր, որտեղ այն այլևս չի գիտակցվում, քանի որ տվյալ բառը առանձին այլևս գործածական չէ կամ միևնույն իմաստով այլևս գործածական չէ: Օրինակ, *զգենուլ/զգեստ* բառերի արմատը զրական հայերենում առանձին պահպանված չէ, սակայն գործածական է բարբառներում՝ Ղրբ. *կենալ* «հագնել», *կեց տալ* «հագցնել», Սշ., Սլշ. *զեստ* «զգեստ»: Լատիներեն համարժեքը համարվում է *vestis* «զգեստ, աստառ, գորգ՝ ծածկոց, մորթի» բառը: Սակայն լատիներենում կա *զգեստ* բառի մեկ այլ, հայերենի ստուգաբանության տեսակետից խիստ հետաքրքրական համարժեք՝ *gestāmen* «բռն, հագուստ, զենք, պատգարակ», որի արմատն է՝ *gesto, āre*, և որը *gero, ere* «կրել, տանել» բայի սաստկականն է (սուպին՝ *gestum*): Վերջինիս համարժեքն է հայերեն *կիր/կրել* բայը: Այսինքն, *զգեստ* նշանակում է «կրելու կամ կրած ինչ-որ բան»:

2/ս նախամասնիկով կազմված հայերեն բառերից շատերը *s* նախամասնիկ կրող համարժեքներ ունեն հ.-ե. լեզուներում, որը հնդեվրոպաբանության մեջ ընդունված է կոչել շարժական *s* (*s mobile*): Այս մասնիկի ծագումը վերջնականապես պարզված չէ: Ոմանք այն համարում են անհայտ քերականական կազմիչի մնացորդ, սակայն լեզվաբաններից շատերը այն համարում են առանձին ձևաբանական իմաստ չունեցող հավելում: Բարոուն, օրինակ, անհիմն է համարում շարժական *s*-ն հնագույն նախածանցի մնացորդ համարելու

տեսակետները¹: Ա. Դոլգոպոլսկին գտնում է, որ հ.-ե. նախալեզվի հնագույն շրջանում բառասկզբում տեղի է ունեցել կոկորդային շնչի հավելում, որը քմային հնչյունների հարևանությամբ քմայնացել և վերածվել է s-ի: Մեկ այլ տարբերակ նա համարում է հնագույն կոկորդային պայթյունի (*t)՝ քմայնա-նալու ճանապարհով s-ի վերածվելը²:

Է. Մակաևը մանրամասն վերլուծության է ենթարկել շարժական s-ն՝ քննարկելով բոլոր հնարավոր տեսակետները: Ինչպես նշում է Է. Մակաևը, անցյալի որոշ լեզվաբաններ այն համարել են հ.-ե. անհետացած նախածանցի մնացորդ: Ա. Մեյեն գտնում էր, որ այս վարկածը արժանահավատ չէ. քանի որ «հ.-ե. նախալեզուն նախածանցներ չէր ճանաչում»³: Ոմանք այն համարել են հավելում, ինչպես Բարոուն: Շարժական s-ին, որպես երևույթ, վերագրվել է նաև ենթաշերտային ազդեցություն, սակայն մերժվել է այս տեսակետը ևս այն հիմ-նավորմամբ, թե միևնույն ենթաշերտային ազդեցությանը չէին կարող ենթարկ-վել բոլոր հ.-ե. լեզուները: Կարծիք է հայտնվել նաև, թե այս նախամասնիկը նախորդ բառի վերջավորությունն է, որը միացել է հաջորդ բառին:

Վերլուծելով հնարավոր տարբերակները՝ Է. Մակաևը եկել է այն եզրա-հանգման, որ շարժական s-ն ինչ-որ ժամանակ եղել է ինքնուրույն մասնիկ, հետագայում աստիճանաբար իմաստը մթազնել է, սակայն այն մասամբ պահպանել է ազատ տարբերակայնությունը, մասամբ էլ արմատի հետ միասին վերածվել է ավելի պարզ կառուցվածքի⁴:

Նկատվում է, սակայն, որ ոչ բոլոր դեպքերում է գիտակցվում այդ մասնիկի գոյությունը: Օրինակ, հայերենի *սպան-* արմատի հետ, կարծում ենք, պետք է կապել իսլ. *bana* «սպանել», *baní* «մահ», շվեդ. *högö. pñsut. bane* «մահ» (նաև՝ շվեդ. *baneman* «մարդասպան») բառերը: Հավանաբար նույնն է հայ. բրբռ. *բանհոգի անել* ձևը:

Ս նախամասնիկով են կազմված ռուսերեն *скала/осколок, скопец, сколько, скоро/ скорлупа, скрести, скудный, смуглый, смурый, смерть, стелю/стлать, стена, стуж*: Կան նաև *казать – сказать, колзать – скользить* տիպի ծագումնաբանական կրկնակներ⁵: Նմանատիպ բառերն ունեն առանց նախա-

¹ Т. Барроу, Санскрит, М., 1976, с. 79.

² А. В. Dolgopolsky, Introduction: The Nostratic Macrofamily, p. 7-8 [http://www.nostratic.ru/books/(93) INTROD. pdf].

³ Э. А. Макаев. Структура слова в индоевропейских и германских языках, М., 1970, с. 246.

⁴ Указ. соч., с. 253.

⁵ М. Фасмер. Этимологический словарь русского языка, т. 2, М., 1967.

մասնիկի հաճդես եկող զուգահեռներ միևնույն կամ այլ լեզուներում, օրինակ՝ լատին. scabo, ere «քերել», լիտվ. scapas «ներքինի», scapiati «ամորձատել», ռուս. скепать, скопец – հայ. *կոփ*-, լատին. scribo, ere «գրել», հուն. γράφω «քերծել, գծել, գրել» - հայ. *գիր*, լատին. spargo, ere «ցրել», sparsus «սփռված», հուն. σπαίρω «ցանել, ցրել», σποράς «ցրված», սանս. स्फर [sphar] «ծգել, բացել», անգլ. spread «տարածել» - հայ. *փռել/սփռել*, լիտվ. kaisti «շիկանալ», skaiustus «լուսավոր» - հայ. *կայծ*: Լատիներեն sterno, ere «տարածել», սանս. स्तर [star] «տարածել, ծածկել», ռուս. сторона/про-стор/про-торенный, և հայ. *տարածել* բառերի արմատը նույնն է՝ ter-, -тор-, *տար*։ Այլ օրինակներ՝ հուն. σφάλω «բանդել, փուլզել» - հայ. *փուլ*, հուն. σφύρα «մուրճ» - հայ. *փորել*, հուն. σμύχω «ղանդաղ այրել» - հայ. *մուխ/մխալ*, հուն. σκολιός «ծուր» - հայ. *կաղ/շեղ/շիլ*, լիտվ. skusti «խուզել» - հայ. *խուզել*, skuduras «լաթ» - հայ. *կտոր*, skersti «կտրել, ծակել» - հայ. *քերծել*, լիտվ. smulks «մանր» - ռուս. мелкий:

Գերմանական լեզուներում ևս բազմաթիվ օրինակներ կան։ Օրինակ՝ շվեդ. skära «կտրել, ծնել», (հայ. *քեր*), sprjalka «ծեղքել» (հայ. *փեղկ*), steka «տապակել, թխել» (հայ. *տաք*), stöpa «լցնել» (հայ. *թափ*), դան. skele «աչքը շլել» (հայ. *շիլ, շեղ, խեղ*), նորվ. skjær¹ «լույս» (հայ. *կրակ*), skjær² «ստորջրյա քար» (հայ. *քար*), skjær³ «կտրվածք» (հայ. *քեր*):

Շարժական s -ն համարվում է հ.-ե. լեզուներին բնորոշ նախամասնիկ։ Եթե նկատի առնենք այն, որ ֆ.-ուգր. լեզուներում վանկի սկզբում բաղաձայնների կուտակում անհնար է, ապա պարզ է, որ բնիկ ֆ.-ուգր. բառերում s + բաղաձայն հնչյունախումբ չի կարող լինել։

Սակայն ֆ.-ուգր. լեզուներում գտնում ենք՝ ֆինն. askel «քայլ», askelma «աստիճան», էրզ. эскелямс «քայլել», эскелькс «քայլ», մոկշ. асколькс «քայլ», асколямс «քայլել», մար. ашкыл/ ошкыл «քայլ», ошкылаш «քայլել»։ Այս բառերում կարծես թե պարզորոշ առանձնանում են ֆինն. as- և մյուս ֆ.-ուգր. լեզուներում ac-/эс-/аш-/ош- մասնիկները։ Արմատն է, ուրեմն, kel/ kul/ кал/ кел/ кол/ кыл, որը ապացուցվում է այլ օրինակներով՝ էստ. kulց «ընթացք», kulgeta «անցնել, հոսել», ուղմ. калгыны «շրջել, թափառել», մոկշ. кялемс, մար. келаш «անցնել, քայլել ջրի միջով», ինչպես նաև էրզ. икеле «առաջ, առջևում», икелев «ղեպի առաջ», икелен «ապագա»՝ անհայտ և մասնիկով։ Այս արմատի հայերեն համարժեքն է *բայլ*-ը։

Հայերենի *կոր/ կեռ* արմատը *ֆ*-ուզը. լեզուներում ունի բազմաթիվ գուգաբանություններ՝ ֆինն. *kiero* «ծուռ», էստ. *kera* «գունդ», հունգ. *kör* «շրջան» և այլն. Որոշ լեզուներում կան օրինակներ, որոնք ներկայացված են առ նախամասնիկով՝ էրզ., մոկշ *ащкорямс* «փաթաթել, կծկել», մոկշ. *ащкоркс* «փաթեթ, բարուր»։ Կոմի *керны*, ուղմ. *карыны* «անել» բառի դիմաց ֆիններենում *as-* մասնիկով գտնում ենք՝ *askat* «գործ, զբաղմունք»։

Հայերեն *ոսկի* բառի դիմաց, որի *հ*-ն համարժեքներն են՝ սանս. *वस* [*vas*] «շողալ, փայլել», լատին. *aes, aeris* «պղինձ, բրոնզ» բառերը, *ֆ*-ուզը. լեզուներում գտնում ենք՝ ֆինն. *vaski* «պղինձ» էստ. *vas/k, -e* «պղինձ», *vaskne, vase* «պղնձե», հունգ. *vas* «երկաթ», *vasgyár* «մետալուրգ. գործարան» (Ըստ Բ. Կոլինդերի ուրալյան արմատ է⁶, իսկ Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը համարում են. այսպես կոչված, թափառող բառ⁷)։ Ակնհայտ է, որ ուղմուրտ. *азвесь* «արծաթ», *узвесь* «անագ, կապար» ձևերում որպես արմատ պետք է առանձնացնել *-весь*-ը, իսկ. *аз-* և *уз-* մասնիկներ են։

Ի՞նչ է, այնուամենայնիվ, շարժական *s*-ն։ Կարծում ենք, այն առանձին բառ է եղել, որը որպես ձևույթ միացել է արմատին՝ գիտակցվելով իբրև նախածանց, որից ժամանակի ընթացքում մնացել է միայն մեկ հնչյուն։ Այս տեսակետի դեմ փաստարկ կա, թե այդ դեպքում նախածանցը պետք է ավելանար նաև ծայրավորով սկսվող բառերից առաջ։ Տեսականորեն *s* նախածանցը ածայանման գոյություն ունի ծայրավորից առաջ, սակայն այն ապացուցելը որոշակի դժվարությունների հետ է կապված։ Օրինակ՝ արդյո՞ք *հ*-ն. լեզուներում բառակազմում *s ~ h/Ø* զուգահեռների գոյությունը հենց այս նախածանցով չի պայմանավորված, որտեղ ածանցին հաջորդող դիրքում հայտնված կոկորդայինն ուղղակի ընկել է։ Չէ՞ որ հայերեն ծայրավորով կամ կոկորդային *հ*-ով սկսվող որոշ արմատների *հ*-ն. նախածանցն են համարվում *s* բաղաձայնով սկսվող արմատներ, սակայն խեթերենի, ինչպես նաև *ֆ*-ուզը. որոշ օրինակներ ցույց են տալիս, որ կոկորդայինով սկսվող արմատները շատ հին են։ Օրինակ՝ հայ *ամառն* (*հ*-ն. **som*), պիլ. *hāmīn*, սանս. [*sāmā*], իռլ. *sam*, կիմր. *ham*, գերմ. *Sommer* և այլն։ Ֆիններենում գտնում ենք՝ *huomen, aamu* «առավոտ», խեթերենում՝ *hamesha* «զարուն»։ Հայերեն *առու* (*հ*-ն. **su*) արմատի դիմաց *s* հնչյու-

⁶ B. Collinder, A Handbook of the Uralic Languages, p. 83:

⁷ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, т. 2, Тб., 1984, с. 932:

նով սկսվող տարբերակների հետ միասին՝ սանս. [arɲav] «օվկիանոս, ծով», [ars] «հոսել», հուն. ουρος «ջրանցք, առու», հունգ. ar «հոսք», ֆինն. ouro «առու», ուրմ. օր «առվակ», մար. էրգ. эрьке «լիճ», խեթ. art-/arr- «լվանալ», խեթ. ħarna-/ħarn-, ħurna-/ħurne- «ցողել, լցնել, կաթեցնել»: Այսպիսի օրինակները շատ են, սակայն հարցի բարդությունն այն է, որ և՛ s –ով, և՛ h/ø –ով սկսվող արմատները կարող էին ծագել բառասկզբում հետնալեզվային պայթական (k/k'/k'') ունեցող տարբերակներից, ինչպես լատին. cor, cordis, անգլ. heart, հայ. սիրտ, հուն. δέκα, լատին. decem, գոթ. taíhwa, հայ. տասն: Այս դեպքում հասկանալի է, որ բառասկզբի s-ն շարժական s-ի հետ ոչ մի կապ չունի:

Ի տարբերություն հ.-ե. լեզուների, որտեղ շարժական s-ն մեծ տարածում ունի, ֆ.-ուգր. լեզուներում այս նախանասնիկով բառերը շատ քիչ են, ֆ.-ուգր. քերականության մեջ համարվում են արմատի մաս, և տպավորությունն այնպիսին է, թե դրանք փոխառություններ են: Բառասկզբի ծայնավորը հուշում է, որ փոխառությունը կատարվել է մի այնպիսի լեզվից, որում նույնպես բառասկզբում բաղաձայնների կուտակում չկա: Հայտնի է, որ ֆ.-ուգր. լեզուներում s+բաղաձայն հնչյունախմբով սկսվող հ.-ե. փոխառություններում տեղի է ունենում բառասկզբի s հնչյունի անկում: Եթե սա հայերենի ս/զ սաստկացուցիչն է, ապա, հավանաբար, հայերենի գաղտնավանկի ը-ն (ըս-պանել, ըզ-գեստ, ըզ-քայլ) կարող էր պատճառ դառնալ նախանասնիկի ac-/эс-/am-/om- տիպի արտասանության, քանի որ ֆ.-ուգր. լեզուներում ը հնչյունը գրեթե չի պատահում:

Ֆ.-ուգր. լեզուների ac-/эс-/am-/om- մասնիկներին շատ նման են խեթերենի is- հնչյունախմբով սկսվող բառերը, օրինակ՝ iskall- «ճեղքել, պատռել», iskar- «խայթել, խոցել, ծակել», ispar- «տարածել», isparnu- «ցրել», ispant-/šipant- «գեղել, զոհել» և այլն: Խեթերենի օրինակներում, այսպիսով, շարժական s-ն ընդունել է is-/ši- ձևերը:

Այս բառերը բազմաթիվ զուգահեռներ ունեն հ.-ե. լեզուներում առանց is- մասնիկի: Չայնավորի առկայությունը, թերևս, բացատրվում է նրանով, որ խեթերենում նույնպես բառասկզբում բաղաձայնների կուտակում չկա:

Չայնավորի հավելումով շարժական s-ն հայտնվել է նաև հ.-ե. որոշ լեզուներում, սակայն հատուկենտ օրինակներով՝ ռուս. осколок (արմատն է՝ кол-/колоть) և искра, որի համարժեքն է հուն. έσχαρα «օջախ, կրակ, խարույկ» - հայ. կր-ակ, խար-ոյկ, նաև՝ հուն. ιστορέω «նկարագրել, պատմել» (ιστορία

«պատմություն»), որի արմատը համարժեք պետք է համարել հայերեն *ընթեռնուլ* բառի արմատին (*թեռ-*)^{*}:

Վերոբերյալ վերլուծությունից գալիս ենք այն մի շարք եզրակացությունների:

ա/ Այն լեզուն, որից մնացել է *s* նախամասնիկը, պետք է ունենար *s/z*-ով վերջացող ցուցական դերանուն, որի մնացորդն է խնդրո առարկա նախամասնիկը:

բ/ *Ֆ*-ուզր. լեզուներում *s* նախամասնիկը բնիկ չէ, քանի որ *Ֆ*-ուզր. լեզուներում այն որևէ իմաստ չունի, որպես մասնիկ չի գիտակցվում և չի առանձնացվում: Ֆիննաուգրագետները թյուրիմացաբար այն համարում են արմատի մաս:

գ/ *Ֆ*-ուզր. լեզուներում *s* նախամասնիկից առաջ հայտնված ծայնավորը վկայում է, որ *Ֆ*-ուզր. լեզուներին այն չէր կարող անցնել *h*-ե. այն լեզուներից, որոնցում սովորական երևույթ է բաղաձայնների կուտակումը վանկի սկզբում, հետևաբար, շարժական *s*-ից առաջ ծայնավոր չկա: Այդպիսի լեզուներից կատարված փոխառություններում բառասկզբի *s*-ն *Ֆ*-ուզր. լեզուներում ընկնում է, եթե *s*-ին հաջորդում են այլ բաղաձայններ:

դ/ *Յ*-ե. շարժական *s*-ն որոշյալ հոդ է և կարող էր ծագել ցուցական դերանունից:

ե/ Ցուցական դերանվան մնացորդ է մաև հին հայերենի *զ* նախամասնիկը և ծագումով համարժեք է *h*-ե. շարժական *s*-ին:

ON THE ORIGIN OF THE INDOEUROPEAN MOBILE S

The comparative study of grammatical coincidences between IE and FU languages is one of the most actual problems of nostratic linguistics. The article discusses the problem of IE mobile *s* which in comparative linguistics is considered to be an exclusively IE phenomenon.

The analysis of IE mobile *s* shows that in some FU languages a similar formant, which forms a separate syllable, is to be found. It is assumed that the grammatical meaning of the mobile *s* corresponds to that of Old Armenian particle *զ* and could have originated from a demonstrative pronoun.

^{*} Արդյո՞ք վրացերենի *սա-*, *սո-*, *Յց-* նախածանցները կապ չունեն այս նախամասնիկի հետ՝ [սատանջվելի] «տանջանք», [սագիժե] «խելագարություն», [սագիժեթի] «զժանոց», [սիլուրջե] «լրջություն», [սիմուրջե] «համություն», [սիմուրբ] «մզուրբություն», [շեմուրվա] «մրոտում», [շեջախեբա] «բախում»: